

չէին միշտ մառանին մէջ մնալու, բայց անոր հետ սերտ աղերս ունէին:

Կարաս: Գինւոյն առաջին եւ մեծագոյն ընդունարանն եղած է հնուց ի վեր, ինչպէս կ'իմացուի Փաւստոսի բացատրութեանէն, «գիարասսամենայն մառանացն» (108), եւ Ալաւկայ որդւոյն քաջածանօթ է դեռ «կարաս գինով» կամ «կարաս ծեփեալ գինոյ». որ եթէ պղծուի՝ «կոտորեսցեն», կ'ըսէ (ԺՁ, Գ), ցուցնելով թէ խեցեղէն էր այն նման այժմուս, կամ «ի բրտի փոնէն» ելած (Վաստ. 89), ինչպէս էր միւս ազգաց քով ալ: Միջին դարուն նաեւ գոչք կոչուած է. «լցան գոչք գինւոյ» (Յհ. կթղ. 250), եւ Յուսիայ ասպատակները «խորտակեալ (էին) զգոչքս գինւոյ» Սիւնեցւոց (Որբ. 141): — Հոմանիշ յն. πίνος (Առկ. ԻԳ, 27), Յունաց եւ Հռովմայեցւոց մէջ՝ էր խոշոր, ստուարափոր, անպարանոց եւ լայնշի բերանով, նեղ ու տափարակ յատակով (Դար. Բ, 333), ինչպէս է ցարդ Հայաստանի մէջ ալ: Ընդ հակառակն վաստակոց գիրքն անոր վիզ կուտայ. «Օձ գկարասին շնին ի ներքուստ մինչեւ ի բերանն» (116): Բայց եւ սա լայն է միշտ, այնպէս որ իւր մէջ ճառայ մը կրնար մտնել (նոյն, 117): Եւ իւր այս մեծութեան պատճառաւ մեր իշխանք եր-